



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 հունվարի 2020 թվականի N 11 -Ա

## «ՎԵՐԻՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Սյունիքի մարզպետի 2011թվականի հոկտեմբերի 2-ի N 145-Ն որոշման հավելվածի 6.2 կետով և հիմք ընդունելով մարզպետի և տնօրենի միջև 2017 թվականի հունվարի 16-ին կնքված N 6 աշխատանքային պայմանագրի 6-րդ կետի 6.1 կետի ա) ենթակետը՝

**ո ր ո շ ու մ ե մ .**

2020թ. հունվարի 16-ից լուծել «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նատալյա Հակոբյանի հետ 2017 թվականի հունվարի 16-ին կնքված N 6 աշխատանքային պայմանագիրը՝ նրան նշանակելով նույն կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

16.01.2020



**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀՈՍՅԱՆ ԿՈՄՄՈՆԱԿԱՏ ԿՈՏԱՅՆ 4005640117

2020թ. հունվարի 15  
ք. Կապան